ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 196-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 16/4 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով և 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 16/4 որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետը լրացնել նոր «Ծրագրի 1-ին մասը կազմվում է Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի հիման վրա:» նախադասությամբ:
2) 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել նոր՝ «հաշվեքննությունները սահմանվում են Հաշվեքննիչ պալատի ժամանակային, իրավական, կադրային և տեխնիկական կարողություններին համապատասխան,» խմբագրությամբ:
3) 5-րդ կետից հետո լրացնել նոր 5. 1 ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1 Հաշվեքննիչ պալատը Ծրագիր կազմելիս հաշվի է առնում ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման համար սահմանված միջոցառումները:»:

4) 8-րդ կետի 1-ին ենթակետում «10 միլիարդ դրամը» թիվը և բառերը փոխարինել «ընդհանուր բյուջետային հատկացումների 1 %-ը» բառերով և թվով:
5) 8-րդ կետի 2-րդ ենթակետում «5 միլիարդ դրամը» թիվը և բառերը փոխարինել «ընդհանուր բյուջետային հատկացումների 0,1 %-ը» բառերով և թվով:
6) 8-րդ կետի 3-րդ ենթակետում «5 միլիարդ դրամը» թիվը և բառերը փոխարինել «ընդհանուր բյուջետային հատկացումների 0.1 %-ը» բառերով և թվով:
7) 20-րդ կետի 1-ին ենթակետում հանել «հաշվեքննության պոտենցիալ օբյեկտների,» բառերը, ինչպես նաև «պահանջները» բառը փոխարինել «ակնկալիքները» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱՋՅԱՆ